

Ըջվ  
01.11.8.

Լ. ՄՈՒՐԱԼՅԱՆ

1913 Մ.

ԿԱՑՍԵՐԱԿԱՆ

Մ Ա Տ Ա Ն Ի

ՉԱՏՄՈՒԱԾԻ

Քրիստոնէութեան առաջին դարից

Բ. տպագրութիւն

Թարգմանեց

Նիկողայոս քհն. Բոսնակեան



891.71  
Մ-99

Եր-Նախիջևան  
Տպարան Ս. Յ. Աւագեանի

Нахичевань н-Д.  
Тип. С. Я. Авакова

1913

2

891.71  
Մ-99  
| | Արմ.  
| | 2-5093a

30 OCT 2006  
25 NOV 2010

Լ. ՄՈՒՐԵԼԻՆ

# ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

## Մ Ա Տ Ա Ն Ի

ՊԱՏՄՈՒԱԾՔ

Քրիստոնէութեան առաջին դարից

Բ. տպագրութիւն

Թարգմանեց

Նիկողայոս քհ. Բոսնակեան



ԿԻՅ. № 20749

Նոր-Նախիջևան  
Տպարան Ս. Յ. Աւագեանի

Нахичевань н-Д.  
Тип. С. Я. Авакова

1913

12.186

### ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԱՏԱՆԻ

82 թ. դեկտեմբերի 24-ն էր:

Դոմիլիանոս կայսրը, որ ուտիլ խմելու մէջ  
չափաւոր էր, հրեք նշանակուած ժամանակից  
աւելի երկար չէր նստում, մինչև անգամ պալա-  
տական փառահեղ խնճոյքներին: Այդպէս էր և  
այդ օրը, չնայած որ նրա մօտ, Սստուրնի տօնի  
վերջին օրուայ առթիւ ընթրում էին հռովմէա-  
կան համարեա բոլոր մեծամեծները: Հէնց որ  
նրա շքեղ սեղանատան էմալեայ կապուտակ պլու-  
տուող կամարի վերայի արհեստական արեգակը  
սկսեց մայր մտնել իսկ նրա փոխարէն դուրս  
եկաւ լուսինը ճիշտ իրականին համապատասխան,  
կայսրը վեր կացաւ տեղից և իւր քաջահնչիւն  
ձայնով խօսեց:

— Իմ թանկագին ու սիրելի հիւրերը, ինչ-  
պէս հաճելի է նրանց, այնպէս էլ թող տեղա-  
ւորուեն. ցանկացողները կամ թող մնան այս  
սենեակում, կամ թող գնան իրանց ամուսիննե-  
րի մօտ, որ սեղանակից են կայսրուհուն. միայն  
թէ, խնդրում եմ ինձ ներքէ, երբ ես իմ սովո-  
րական զբօսանքը կատարեմ, դրանից յետոյ  
կրկին կըմխանամ ինձ սպասողների հետ:



39725-67

Հիւրերը շնորհակալութիւն յայտնելով ամփիտրիոնին\*) ճոխ հիւրասիրութեան համար, բաժանուեցան խմբերի: Խմբի մէկ մասը ուղևորուեցաւ դէպի կայսրուհու սեղանը, որտեղ կայսրուհին հոովմայեցի ազնիւ տիկիներին հիւրասիրում ու մեծարում էր, իսկ հիւրերի միւս մասը ցրուեցաւ կայսեր անծայր ու լայնատարած շքեղ դահլիճներում, որտեղ բոլորն էլ կարող էին ստանալ իրանց ցանկացած հոգեկան հաճոյքը: Դրանք բոլորովին հրաժեշտ տուին Դոմիկիանոսին, իսկ միւսները նրան ուղեկցելու կոչուեցան:

— Դէպի ո՞ւր նորին մեծութիւնը կը բարեհաճի այսօր ուղևորուել, հարցրեց յարգանքով Սարկ Կոկկէյ Ներվան դիմելով այն մարդուն, որը առժամանակ վարում էր Հոովմ քաղաքի ստիկանութեան կառավարչի պաշտօնը և որին ինքը ապագայ յաջորդ էր լինելու:

— Այո, ճիշտն ասած չգիտեմ, տարակուսանքով պատասխանեց Դոմիկիանոսը:— Ես, աւելացրեց նա, տատանում եմ, չը գիտեմ մեր թիկնապահների բանակը դնամ, թէ հռովմէական կայսրութեան թագադիրների մեծ դամբարանը, որպէս-հրեկոյեան դբօսանքի ամենահեռաւոր վայրը: Բայց իսկապէս ես դէպի ո՞ւր ուղևորուեմ: Եթէ դնամ մեր թիկնապահների բանակը անկասկած այնտեղ յանկարծական սարսափ ու շիրոթ առաջ պիտի գայ իմ անակնկալ այցելութիւնից, նամանաւանդ այսօրուայ ընդհանուր սանձարձակ ուրախութեան առթիւ. իսկ եթէ կեսարները դամ-

\*) Արքունական հիւրընկալ:

բարանը դնամ, անշուշտ սրամիտ մարդկանց զբլխում կը ծագի այն կարծիքը, որ իբր թէ ես բառի բուն նշանակութեամբ իմ նախորդների հոգիների հետ հաղորդակցութեան ու խորհրդակցութեան մէջ եմ, և միւս օրը ես փողոցային բանաստեղծութիւններ թխողների անճոռնի յօդուածներում պիտի ներկայանամ որպէս հոգեխօս: Եւ դեռ ևս այդ բանը իմ նոր հանած այն հրովարտակի հետ կը կապեն, որի մէջ ես հրամայում եմ հալածել Իտալիայի սահմաններից այն բոլորին, որոնք փիլիսոփայութեան վերարկուի տակ իրանց ցոյց էին տալիս իբրև հոգեկոչներ, գուշակողներ, կեղծ աստղագետներ, վհուկներ և դրա նման սրիկաներ, և կասեն, թէ ես առ ի նախանձու կամենում եմ նրանց հալածել:

Ներկայ եղողները կայսեր հանաքի վրայ իբր պատասխան արտանց ծիծաղեցին, իսկ գվարդիական թիկնապահների կառավարչապետը, մուրվիյ Նորբանը, շտապեց ասել:

— Արքա, ձեր անակնկալ այցելութիւնը մեր բանակին իսկապէս պիտի պատճառէ անպատմելի ուրախութիւն և ես խորապէս համոզուած եմ, որ դուք ինչպէս և ամեն ժամանակ, այնպէս էլ այժմ կը գտնէիք նրան օրինակելի կարգապահութեան մէջ:

— Ո՛հ, ես վերջինի նկատմամբ ամենեւին չեմ կասկածում, իմ յարգելի կառավարչապետ,— պատասխանեց Դոմիկիանոսը:— Բայց չէ՞ որ ես եթէ գնալու լինեմ այնտեղ, դու այն ժամանակ պարտական ես ինձ ուղեկցել, այն ինչ ես գիտեմ որ քո նորատի կիւնը անդիմադրելի կերպով քաշում է քեզ կայսրուհու սենեակը. հաւանական է,

որ նրա համար առանց քո կապուտակ աչքերի փայլին այնտեղ մուժն է, աչքերի՝ որը քո գերմանական նախորդների ժառանգութիւնն է: Հանգստացիր և գնա կնոջդ մօտ: Ես այսօր գնալու չեմ մեր բանակի կողմերը:

Այս խօսքերի վրայ թիկնապահները կառավարչապետը չափազանց ուրախացաւ և շտապեց դէպի կայսրուհու խնձոյքի սեղանը, ուղեկցուելով ներկայ եղողներից մի քանիսի անմեղ կատակներով:

— Կառավարչապետի հեռանալուց յետոյ, կայսրը վճռական տոնով արտասանեց, ուրիմն հս կը գնամ կիսարների դամբարանը:— Թող իմ մասին ինչ ուզում են մտածեն. մեղ համար միկնոյն է սուտ ասէկօսէններից անհնարին է խուսափելը: Ահա այսպէս է մեր վիճակը:

— Քո խօսքերից, արքա, իմաստութեան հոտ է բուրում, նկատեց Ներվան. ամեն մի ապրող աշխարհիս երեսին անպայման ասէկօսէների ու բամբասանքների առարկայ է լինելու և որքան նա բարձր է կանգնած մարդկանցից, այնքան էլ քիչ կարող են հասկանալ նրան. այդ բնական է...: Բայց, Տէր արքա, թոյլ կտաք ինձ արդեօք, հաղորդել ձերդ մեծութեան մի ինչ որ նոր բան: Ըստ իմ պարտաւորութեան հս պէտք է հաղորդեմ ձեզ, որ վերջապէս իմացայ, թէ որտեղ է գտնուում Միֆրայի՝ այդ պարսկական Արեգակի աստուծոյ այրը, որի երկրպագուները մինչև ցարդ այդպէս խնամքով ու մեծ հողացողութեամբ թաղցնում էին իրանց սրբավայրը: Երէկ ինձ յաջողուեց գտնել այդ սրբավայրը և միկնոյն ժամանակ տեղեկութիւն ստացայ, որ

այսօր կէս գիշերին նրանց այրում լինելու է առանձին հանդէս: Միֆրայի ստորին սպասաւորներից մէկի անզգուշութեան շնորհիւ, որ այս հանդէսի պատրաստութիւններովն էր ղրադուած, օգնեցին ինձ գտնել այրը:

— Այ, այդ շատ հետաքրքրական է,— արտասանեց Դոմիկիանոսը: Ես արդէն վաղուց լսել էի այդ օտարերկրեայ պաշտամունքի մասին, որը խորհրդաւոր խաւարի մէջ թագնուած է, բայց ստոյգ ոչ մի բան չը կարողացայ իմանալ: Քո այդ գիւտի համար, Մարկ Կոկկէյ, ես քեզ կը վարձատրեմ Նոր տարուն:

— Ներեցէք, Տէր արքա, ասաց Ներվան մի քայլ յետ քաշուելով ու համեստ բողբօի նշան արտայայտելով: Այդ ծառայութիւնը իմա չէ: Հասարակ պատահմունք է...:

— Բայց չէ՞ որ այդ գէպը ընտրեց իբրև զէնք յատկապէս քեզ,— ժպտալով վրայ բերեց Դոմիկիանոսը:— Իսկ ճրտեղ է գտնուում այդ այրը:

— Ապա իման ճանապարհի վրայ, Հոովմից 20 ստադիա\*) հեռաւորութեամբ, այդ ճանապարհից մի քիչ հեռու, կայ ծագումով անյայտ մի լայնատարած ստորերկրեայ տապան, ահա այդտեղ է գտնուում: Այնտեղ կան բազմաթիւ երկար խառնակ անցքեր, մի քանի ստորերկրեայ մութ սինեակներ զանազան կողմեր դուրս գալու անցքերով: Առհասարակ այս ոչ այլ ինչ է, բայց եթէ կղիպտական լաբիրինտոս:

— Ահա թէ ի՜նչ, Այո, այս ամենը վերին

\*) Տարածութեան չափ:

աստիճանի հետաքրքրական է,—կրկնեց Դոմիկիանոսը:

— Բայց կը թողնե՞ն ինձ մտնել այդ սըրբավայրը: Ես լսել եմ, որ այդտեղ մուտք գործել կարող են միմիայն այդ պաշտամունքը դաւանողները...

— Ո՛հ, մեծապանծ արքա, մի՞թէ կան այնպիսի դռներ երկրի վրայ մի որևէ տեղում, որոնք չը բացուէին ձեր ամենակարող մեծութեան առաջ.— շողորթութեամբ բացականչեց կայսեր ձորտութիւնից ազատուածներէից մէկը, յոյն կրիստոսը, որի չափազանց թեթևալիկութեան ու անձնագով բնաւորութեան համար Իւվինալը իւր կծու երգիծաբանութիւններէ մէջ նրան անվահացնում է:

— Ո՛հ, իմ սիրուն կրիստոսը,—նրա խօսքին պատասխանեց Դոմիկիանոսը,—մի՞թէ դու այդքան քնքոյշ ես, որ մինչև անգամ զտար քեզ համար ամառը կրելու թեթև մատանի, որովհետև ձմեռուանները սեղմում են քո քնքոյշ մատները,—ես հարցնում եմ, մի՞թէ կարող ես դու քո քնքուցութեամբ կոպիտ բռնութեան առաջ կանգնել: Իմացիր, որ ես քեզ նման թեթևամիտ չեմ, և ուրիշի սրբավայրն էլ բռնի մտնելու ընդունակ չեմ:

-- Տէր արքա, անհանգիստ մի լինիր,—ասաց Ներվան:—Ես ամենը նախատեսել եմ և դուայ անհրաժեշտ փոքրիկ նշանը, որով ատանց արգելքի քեզ կը թողնեն. Ահա այդ նշանը:

Այս խօսքերի վրայ կառավարչապետը տուաւ կայսրին մի փոքրիկ, բայց ծանր պարսկական ոսկէ դրամ քառանկիւնի ձևով, որի մի երեսի

վրայ փռիզիական գլխարկով, մի դեղեցիկ պատանու նման պատկերացրած էր Միֆրա աստուածը բռնած լինելով ընդգիմացող եզան եղջիւրից, իսկ միւս երեսի վրայ նկարած էր Արտաքսերկս Մնեմոնի պատկերը, պարսից թագաւորներից առաջինի, որը իր պետութեան մէջ սահմանեց Միֆրայի պաշտամունքը:

Մինչ այս, մինչ այն՝ Ներվայի հաղորդած նոր լուրը արդէն հասել էր ամեն կողմ ցրուած պալատական հիւրերի ականջին: Նրանք եկան մանրամասն տեղեկանալու և ցանկութիւն յայտնեցին ուղեկցել կայսրին՝ գնալու «պարսից աստծու» առճարը:

Մի առ ժամանակ յետոյ ազմկալից խօսակցութիւնների միջից դուրս եկաւ պալատից մի երկար շքախումբ, որի գլուխն էր կանգնած Դոմիկիանոսը, շրջապատուած թիկնապահներով: Ինչպէս միշտ, այնպէս էլ այժմ, երբ կայսրը ձի նստած մի տեղ էր գնում, նրա յետևից ութը բարձրահասակ և ուժեղ սիգամբերը\*) տանում էին նրա փարթամ ու շքեղ պատգարակը:

Խարոյկներով ու ջահերով վառ ու պայծառ լուսաւորուած ու ծաղկաշղթաներով զարդարուած մեծ քաղաքի փողոցներով, միմեանց հրհրելով, անցնում էր ազմկալի ու խառնիճազան ճամբուրը, շրջակայ գիւղացիները ու ստրուկները. գլխաւորապէս այս բոլոր մարդիկը հաւաքուած էին այն հրապարակների վերայ, որտեղ շատըրուաններէից թափուած էին աւազանների մէջ գի-

\*) Գերմանական հին ցեղ, որոնք բնակուած էին Հռէնոսի ափին:

նի և դարեջուր, և ամեն տեղ դրուած էին երկար սեղաններ՝ ամեն տեսակ խորտիկներով: Այս հիւրասիրութիւնը կայսեր հաշուովն էր լինում:

Այդ ժամանակներում Գոմիկիանոսը դեռ երկտասարդ՝ ու գեղեցիկ տղամարդ էր, բարձր ու վայելուէ կազմուածքով և օժտուած վեհ արժանաւորութիւններով ու բարեմասնութիւններով: Նա հիանալի կերպով նստած էր խալանական դտարիւն ու ձիւնափայլ նժոյգի վերայ, հպարտ գլխին ունէր արծուէնիչ ոսկէ սողաւարդը, խկ հագին՝ երկայն ծիրանագոյն քլամիդ, սուտակեայ կոճակներով ասեղնազործուած:

Գլխաւոր կրկէսի մօտից անց կենալով, որտեղ այդ օրը զանազան ծաղրածուական ներկայացումներ էին տալիս, օրինակի համար թղուկների ու արագիւնների զուարճացնող կռիւը, որը հազարաւոր հանդիսատես ամբոխի որստանման ծիծաղն էր շարժում, կայսերական շքախումբը դարձաւ Ապպիան ճանապարհի կողմը, որտեղ երկուստէք շրջապատում էին հռովմէացի ազնուականների գերեզմանատան մահարձանները:

Այստեղ, ուր տխուր կիպարիսների, հատարմատ կաղնիների ու հոտաւէտ ճիւղիների ստուերի տակ հանդչում էր այն մեծանուն մի շարք սիրունիների աճիւնը, որոնցով հռչակուած էր հին պատմութիւնը, — այժմ տիրում էր խաւար ու խորհրդաւոր լուութիւն: Մահարձանների շուրջը փակող վանդա ապամների արանքներից, խճճուած ու փաթթուող բոյսերի միջից, որոնք ամեն տեղ ոստայնի նման ծածկել էին մի քանի դամբարաններ իրենց կանաչ նկարաւոր ծածկոյթով՝ երևում էին միայն տեղ տեղ պլպլացող

անշէջ կանթեղների շողբերը, որոնք մեծ մարդկանց շառաւիղների հոգացողութեան շնորհիւ պահպանուած էին, մարդկանց, որոնցից միայն մնացել էին աճիւնակալ սափորները:

Լուսինը, որ քիչ առաջ լուսաւորում էր, յանկարծ ծածկուեց ամպի տակ, և բոլոր շրջակայքը մի ակնթարթում խաւարով պատեց:

— Ջահերը վառեցէք, — հրամայեց թիկնուպահները կառավարչապետ երիտասարդ տրիբուն Կլավդիոյ Լիվիանոսը:

Նրա յստակ ու դօրեղ ձայնը նկատելի կերպով սկսեց դողդողալ գիտակցութեան աղբիցութեան տակ, որ նա, Լիվիանոսը, հիմա պիտի անցնի իւր հռչակաւոր Կլավդիան նախորդների բազմաթիւ շերիմների մօտից, այդ հպարտ եկուոր սարինացիների, որոնց ծագումը ամենահին ժամանակներից սկսած գոյութիւն ունէր և վերջին հինգ դարերի ընթացքում ոչ միայն դարգարում էր հռովմէական տարեգրերի էջերը, այլև տեսաւ կայսերական գահի վերայ բազմաթիւ իւր երեք ներկայացուցիչներին, Տրեբրիոսին, Կլաւդիոսին և Ներոնին: Երիտասարդ կառավարչապետը աչքի առաջ ունենալով այդ շերիմները մի առանձին թախիժ ու ծանրութիւն էր դգում նրա համար, որ ճակատագրի գուշակման նայելով, նա իւր ցիղի վերջի շառաւիղն էր:

Բոլոր փայլող հասարակութիւնը, որիւր պիտին էր ուղեկցում, այդ գիշերուայ կատարած զրօսանքի ժամանակ, նոյնպէս լաւ չէր գգում իրան, որովհետև այդ բոլորին նրանց առաջ կանգնեց հետեւեալ անարկու խօսքերը՝ memento mori (յիշիր մահը): Յանկարծակի բարձրացած զով

քամու շարժումից ծառերի գազաթների խորհրդաւոր սօսափիւնը և եկող բազմաթիւ շքախումբերից վախեցած բուերի չարագուշակ ձայնը աւելի ևս սաստկացրին գերեզմանատան ծանր սպաւորութիւնը:

Ասպետական դասակարգի ուրախ ծիծաղն ու խօսակցութիւնը խսկոյն կարուեց. միայն լըսուում էր բազմաթիւ ձիերի դոփիւնի գրգռցը բազալտով սալայատակած ճամբու վերայ:

Բամին ուժեղանում էր ու ասպետների վերարկունները թոցնում: Դոմիկիանոսը շատ առողջ չէր, այդ պատճառաւ պալատական բժիշկը, որ շարունակ ուղեկցում էր նրան, օգտուելով ջահերը վառելու հանգամանքից, մօտեցաւ կայսրին և հոգատարութեամբ ասաց.

— Տէր արքա, պարտք եմ համարում խընդրել ձեզ, նստել պատգարակը, որովհետև քանի գնում է օդը ցրտանում է և քամի էլ է, ուրիմն ձեզ այդպիսի եղանակի ձիով զբօսանք շարունակելը վտանգաւոր է:

— Տես, դու չափազանց կրակոտ էսկուլապի քուրմ, ինձ փափկասիրութեան ընտելացնելով, դու կը գրկես մեր սիրելի Կրիսպինին բընքշութեան փառքից, որ ամբողջ պետութեան մէջ առաջինն է համարւում,—կատակով ասաց Դոմիկիանոսը, սպառնալով նրան մատով:—Բայց թող այդպէս լինի, ևս հնազանդւում եմ:

Բժշկի կոչին եղած սիկամբրերը շտապով մօտեցան և ցած դրին վախ պատգարակը, որը շինուած էր թեթև, յղկած տախտակից սէլէնիթական պատուհաններով և միմիայն մէկ դռնով:

որի վերևում թափանցիկ, փոքրիկ, էմալեայ արծիւը տարածել էր թևերը: Պատգարակի ներսում փռած էին փետրալից բարձեր, որոնք ծածկուած էին ծիրանագոյն մետաքսեայ գործուածքով:

Դոմիկիանոսը ձիու սանձը տուեց իւր թիկնապահներից մէկին: Այդ շարժողութեան ժամանակ նրա ձեռքից յանկարծ թռաւ այսպէս կոչուած «կայսերական մատանի»-ն,—որը ծառայում էր իբրև կայսերական իշխանութեան խորհրդանշանը: Այդ մատանին տխրոսի հետ միասին անցնում էր մէկ կայսրից միւսին: Այդ մի լայն, սկիւթական խոշոր զմրուխտով, ոսկէ մատանի էր, որի վերայ փորագրուած էր Օգոստոս կայսիր բիւստը, որ գործածուում էր իբրև կնիք խիստ կարևոր կայսերական վաւերագրերի համար: Այդ իսկ նպատակով էլ մատանին ծառայում էր Օգոստոս կայսիր բոլոր յաջորդներին: Սկիւթական զմրուխտը ստացւում էր Ռիփէան\*) լեռներից և շատ թանկ էր դնահատուում ոչ թէ նրա ջրի մաքրութեան պատճառաւ, որքան նրա հանքատեղի համար, որ ամենահիւսիսային երկրի բնակիչներին սակաւ էր ծանօթ:

Մատանին սահելով Դոմիկիանոսի մատից, ընկաւ ձիու սմբակի տակ, որ դեռ նոր կանգնելու վրայ էր և, սմբակի հարուածից կանաչ աստղիկի նման, յանկարծ փայլեց պայծառ վառուող ջահերի լոյսի մէջ ու անյայտացաւ դէմ ու դէմ եղած Սկիպիոնների շերիմների մօտ:

\*) Այսպէս էին կոչում հուովեկացիք Ուրալեան լեռները:

— Օգոստոս կայսեր մատանին, երկիւղով բացականչեց Դոմիկիանոսը, — նա ընկաւ իմ մատից և ձիւռ ոտքի հարուածից թռաւ անա այնտեղ:

Եւ նա ինքը մեքենաբար պիտի շարժուէր իւր ցոյց տուած ուղղութեամբ, բայց իսկոյն յիշեց բժշկի խօսքերը և շտապեց նստել պատգարակը, հրամայեց բանալ նրա պատուհաններից մէկը, որը նայում էր դէպի անյայտացած մատանու կողմը: Դոմիկիանոսի երկիւղը հասկանալի էր: Մատանին ընկնելով ուրիշների ձեռքը, կարող էր իբրև զէնք ծառայել չարագործութեան, որոնց համար ոչ միայն ինքը կայսրը պիտի տուժէր, այլև ամբողջ հոովմէական պետութիւնը:

— Ատանձին շնորհակալութիւն կը յայտնուի նրան, ով որ կը գտնէ մատանին և ինձ կը յանձնէ, — կանչեց պատգարակի պատուհանից փոխուած ձայնով Դոմիկիանոսը:

Գրեթէ նրա ամբողջ շքախումբը շտապում էր ջահերը ձեռներին որոնել կորսուած մատանին, որը ծաւալով թէև փոքր էր, բայց մեծ էր իւր նշանակութեամբ:

Իրանց տեղում մնացին միայն թիկնապահները, շրջապատած կայսերական պատգարակը:

Մատանին հաւանականորաբար ընկել էր խիտ կանաչների մէջ, որոնք բուսած էին շիրիմների շուրջը, հարկաւ մի անգամից դժուար էր գտնել. դրա համար պահանջուում էր շատ ժամանակ և աշխատանք, մինչև անգամ եթէ ցերեկ էլ լինէր: Բացի դրանից այդ գտնուած մատանին այնպիսի գրաւիչ զօրութիւն ունէր, որ գտնողները կարող էին թագցնել: Ընդհանրապէս գրու-

թիւնը կրիտիքական էր:

Բայց ոչ որ դեռ չէր կարողացել հասնել Սկիպիոնների գերեզմանատանը, երբ նրա սուուերի միջից յանկարծ դուրս եկաւ մի կին, մի ինչ որ բան բռնած իւր մեկնած ու պինդ սեղմած աջ ձեռքի մէջ:

— Գտնիր, շուտով տնւր, — կամաց ձայնով ստիպում էին նրան, կտրելով նրա ճանապարհը մի քանի պատրիկներ ու ազատուած ճորտեր:

Անծանօթ կինը ձեռքը պահելով ծոցում՝ բարձր ձայնով բացականչեց:

— Ո՛չ, ո՛չ, թողէք խնդրում եմ, բարի պարոնայք:

— Ես ինքս անձամբ պէտք է տեսնեմ իրեն՝ կայսրին:

Դոմիկիանոսը լսեց այս խօսքերը:

— Թողէք այն կնոջը, որ ինձ մօտ գայ. — հնչեց նրա իշխանական ձայնը:

Պալատականները իսկոյն և եթ նրան ճանապարհ տուին. ճանապարհ բացին նոյնպէս և թիկնապահները, բայց երբ այդ կինը ոտք կոխեց նրանց շրջանը, նոքա աւելի ևս խիստ շարքերով շրջապատեցին նրան, այնպէս որ, եթէ նա մի որևէ վատ բանով կայսրի դէմ կասկածանքի աւելթ տար, նրան անհնարին կը լինէր իրագործել իւր դիտաւորութիւնը և դուրս պրծնել այդ անտառից, որտեղ փայլում էին նիզակներ ու սրեր:

Նա միջին տարիքի կին էր, դեռ բաւականին գեղեցկադէմ, բայց սաստիկ դալկացած: Նրա խղճուկ հազուստը շատ մաքուր էր: Անծանօթ կինը ակնյայտնի դժուարութեամբ առաջ էր գնում:

Կանգնելով պատգարակի առաջ, որի պատուհանից նրա վերայ նայում էր կայսրը, նա ծուռնկ չոքեց և երկարացնելով ձեռքը Դոմիկիանոսին, ասաց.

— Ահա քո մատանին, մեծազոր արքան: Որը ինձ մօտ ձգեց ինքը Քրիստոս, երբ ես նըստած այստեղ աղօթում էի Նրան, որ ինձ ազատե իմ վշտերից...

— Քրիստոս, կրկնեց Դոմիկիանոսը վերադարձրած մատանին մատն անցնելով, նկատելի ուրախութեամբ և ամրացնելով նրան կողքի փոքրիկ մատի մատանիով, հարցրեց:— Ուրեմն դու հրէից Քրիստոսի երկրպագուն ես... Բայց վեր կաց, սփ կին:

— «Այն, մեծազոր արքայ ես երկրպագուն եմ Քրիստոսին,—պատասխանեց անծանօթ կինը վեր կենալով չոքած տեղից:— Բայց նա ոչ թէ մարդ էր, այլ Աստուծոյ Որդի...»

— Գիտեմ, գիտեմ, բարի կին, որ դու կարող ես շատ բան ասել նրա մասին,—ընդհատեց կայսրը:

— Ես վարդապետութիւն չեմ մկնտրում ես հարցրի միայն այնպէս... Այս մատանին իմ ձին էր շարտել քեզ մօտ, որի ոտքի տակն էր ընկած: Ես ինքս տեսայ, ինչպէս նա խփեց նրան սմբակով և մատանին թուա դէպի այն կողմը, որտեղ, ինչպէս երևում է դու նստած էիր:

— Այն, ամենազոր տէր: Ես այնտեղ յոգնածութիւնից հանգստանում էի և թախանձագին խնդրում էի Քրիստոսին. Որի ծնունդը մենք տօնում ենք վաղը, օգնել ինձ դալու քեզ մօտ, ամենաողորմած կայսր, և լսել տալ քեզ իմ խո-

նարհ խնդիրը: Ահա Քրիստոս քեզ այստեղ բերեց և քո մատանին ձգեց իմ առաջը իբրև գրաւական, որպէսզի դու քո իշխանութեամբ թիթեացնես իմ վշտերը:

Այդ ես կանէի առանց մի որևէ գրաւականի էլ—ասաց Դոմիկիանոսը ողորմած ժպիտով: — Բայց, հասկանալի է, որ քո ձեռքով վերագործրած այս մատանին քեզ համար առանձին փայլուն դիրք է ստեղծելու: Ասան, ի՞նչ է քո խնդիրը: Բայց առաջ ի՞նչ է անունդ և սփ ես դու:

— Իմ անունը,—մեծազոր տէր,—Փլոնիս Փլավիլիա է: Իմ հայրը, Լիւկիւնիոս Փլավիոսը ազգով հոնիացի էր, և ազատուած ճորտ՝ քո երջանկայիշատակ հօր՝ Վեսպասիան կայսեր, ձեռքով: Ես պսակուած եմ մի այգեպանի հետ, և ապրում ենք Ապուլիայում: Թէև մեր ընտանիքը մեծ էր, բայց մենք մինչև վերջին ժամանակներս առանց մի որևէ նեղութիւն կրելու ապրում էինք փոքրիկ այգու եկամուտով: Բայց ահա մի տարի սորանից առաջ, քո հրամանով, մեծազոր արքա, մեզ պատուիրած էր ոչնչացնել այգին և այդ տեղը մշակել ցորենի արտի համար: Այդ բանը մեզ մէկ անգամից քարուքանդ արեց, որովհետև այգու հողը հինգ տարուց յետոյ միայն պիտանի է լինելու ցորեն սերմանելու համար: Մենք այնքան խնայած դրամ չունէինք, որ կարողանայինք հինգ տարի ապրել առանց եկամուտի: Մարդս էլ այգեպանութիւնից զատ ուրիշ գործ չգիտէ, իսկ նորից մի բան սովորելը նրա համար արդէն ուշ է: Ճշմարիտ է նա կարող էր ինչ-որ բանի կարողութեամբ,

39775-63



բայց ինչպէս ես արդէն ասացի, հարկաւոր է սպասել անուշաղն հինգ տարի, որպէսզի հողը ցորեն ցանելու պիտանի լինի, իսկ այդ դործին մենք մարդ չունինք ծառայեցնելու: Այնինչ մեզանից այժմ տուրք են պահանջում բայց բան չկայ, որով վճարենք: Մենք այդ տուրքերը վճարելու համար, տնային կարասիքից ինչ որ հնարաւոր էր ծախեցինք, բայց էլի չբաւեց: Ամուսինս վշտից հիւանդացաւ այնպիսի ծանր հիւանդութեամբ, որ ահա երրորդ շաբաթն է, չի կարողանում վեր կենալ անկողնից: Մենք ունինք հինգ զաւակ, որոնցից միայն մեծը 14 տարեկան է, կոյր սկեսուր և իմ ծերունի ու հիւանդ մայրը: Ես միակ աշխատում էի մեր բոլոր ընտանիքի համար որքան իմ ոյժերս ներում էին: Բայց շատ բան կարող է վաստակել մի օրով բանուոր կին: Բացի դորանից, երբ ես երեկոյհան յոգնած վերադառնում էի տուն, պէտք էր ինձ մինչև կէս գիշեր աշխատել տնային դործերով, որպէսզի քիչ թէ շատ տնային դործերը կարգի բերեմ: Բայց ներքը ինձ, ամենակարճը աէր այն բանի համար, որ ես անհանգստացնում եմ ձեր լսողութիւնը այդպիսի չնչին բաներով, որոնց դու սովոր չես լսելու, — յանկարծ ընդհատեց իւր խօսքը ինքն իրան խօսող կինը, յիշելով, որ կայսրի ներողամտութիւնը կարող է ի չարն գործ դրած լինել:

Բայց Դոմիկիանոսը լսելով նրան մեծ հետաքրքրութեամբ, և չնայելով իւր շքախումբի մեծամասնութեան կողմից եղած անհամբերութեան նկատելի նշանների վերայ, որոնք չափազանց դժգոհ էին այն կանգ առնելուց տխրու-

թիւն բերող զերեզմանատան մէջ տեղում, շտապեց հանգստացնել նրան:

— Ո՛չ, ո՛չ, շարունակիր Փլոնիա Փլավիլիա, ասաց նա:— Դժբաղդութիւնն այն է, որ մենք շատ սակաւ ենք լսում, թէ ինչ է լինում բուն ժողովրդի մէջ: Աստ ամենը ինչ որ ունես, մի վախենար:

— Ծնորհակալ եմ, ամենաողորմած արքա, — խոնարհ գլուխ տալով պատասխանեց Փլոնիան:— Խօսքս վերջացնելու քիչ է մնացել: Մեր թըշուառութիւնը օրէցօր աւելանում էր, իսկ տուրք հաւաքողները յայտնեցին, որ եթէ մենք նշանակուած վերջի պայմանաժամին բոլոր ապառիկները չըվճարենք, այն ժամանակ մեր հողը աճուրդով պիտի ծախեն: Պայմանաժամը նշանակուած է մի շաբաթ: Չիմանալով ինչ բանի ձեռնարկել, ես վճուեցի օգտուել տօներով, որ միևնոյն է այդ օրերը աշխատել չէր լինի, և ստով գալ քեզ մօտ իբրև իմ հօր պաշտպանի որդուն, և խնդրել նրա մեծ գթութիւնը, որպէսզի հրամայէ սպասել տալ մեր վերայ եղած ապառիկներին, մինչև որ մեր դործերը մի քիչ կարգի բերենք: Դու սրանով կազատէիր մեր երկխաներին, ծերերին և մեզ սովամահ լինելուց... Հեռու էր ճանապարհը, ես քիչ ու վատ եմ սընուել, այնպէս որ ես հազիւ եմ կանգնած ոտքի վերայ յոգնածութիւնից ու ուժասպառ լինելուց: Ինձ դեռ երէկ պէտք էր Հովովում լինել, բայց անհրաժեշտ է ինձ թուլութեանս պատճառաւ յաճախ հանգստանալ: Ես այստեղ հասայ երեկոյհան դէմ: Ես մտածում էի, թէ արդէն ուշ է, միևնոյն է ինձ չեն թողնելու քեզ մօտ, սղորմած

տէր: Ես կամենում էի զիշերել այս մեծ դամբարանի կամարակապ սրահի տակ, իսկ վաղը առաւօտեան ես յոյս ունէի մի կերպ քարշ տալով հասնել քեզ: Բայց այստեղ ինձ սարսափ տիրեց, որ դեռ ևս ցերեկէն էլ չը թողնեն ինձ քեզ մօտ: Դժբաղդարար ես մոռացայ ինձ հետ վերցնել տնից վկայագիրս, որ ես ճիշտ քո արքունական պալատի ազատած ճորտի աղջիկն եմ, եթէ ես միայն խօսքով ասէի երևի ոչ ոք չէր հաւատալ: Ես դրա համար այստեղ աղօթեցի մեր Փրկչին, Որը չափազանց խղճում էր աղքատներին, օգնել և ինձ՝ տեսնելու քեզ... Եւ ահա նա, Ողորմածը օգնեց.—խանդավառ ժպիտը դունատ շրթունքներին վերջացրեց Փլոնիան, վեր բարձրացնելով աչքերը, որոնցից գլորում էին արցունքի խոշոր կաթիլներ:

Կայսրը ինքը բացեց պատգարակի դուռը, դուրս եկաւ նրանից և ուշադրութիւն չդարձնելով բժշկի կենդանի բողոքին և ոչ էլ իրան շրջապատողներին, հրամայեց այդ շփոթուած կնոջը նստել իւր տեղը: Յետոյ, դառնալով ամենավստահելի ճորտերից մէկին, ասաց նրան.

— Գրեփ Փլավիոս, ուղեկցիր այս կնոջը դէպի պալատ և խնդրիր իմ ստնտու Փիլիտային հոգ տանել նրա մասին, ինչպէս իւր հարազատ աղջկան... Իսկ դո՛ւ, Փլոնիա Փլավիլիա,—գարձաւ նա նորից կնոջը,—հանգստացիր, կշտացիր ինչպէս հարկն է և քնիր Փիլիտայի տաք ու փոփոռկ անկողնու մէջ, փոխանակ այս կոշտ, պող բարեայ սալատակների վրայ, մեռածների մռայլ թագաւորութեան մէջ: Իսկ որպէսզի կասկածանքները քեզ չը խանգարեն քնելու, ես հիմա կա-

սեմ, ինչ եմ մտադիր անելու քեզ և քո ընտանիքի համար: Ես կը պատուիրեմ ընդմիշտ վերցնել կալուածքի և քո մարդու բոլոր գլխահարկերը ու տւերքերը և հոգ կը տանեմ քո երեխաների համար... Բո՛նը ի՞նչ են, տղայք թէ աղջկերք:

-- Երկու տղայք և երեք աղջիկ, ամենազօր արքա:

— Լնւ: Ես բոլոր աղջիկների համար կնշանակեմ տասնական հազար սեստեր\*) մինչև ամուսնութեան օրը կամ մինչև նրանց չափահաս լինելը և քո որդեկերանց վիճակի կատարեալ ապահովութեան մասին էլ առանձին հոգ կը տանեմ... Յանկալի էր իմանալ, թէ Ապուլիայում շատերը փասս կրեցին այգիներ ոչնչացնելու վերաբերմամբ ելած հրովարտակիս պատճառաւ:

-- Բոլոր մեզ նման մանր այգեպանները, ամենաողորմած տէր, բարբոտին բարուքանդ են հղած և աղբիլու համար ստիպուած են ուրիշ միջոցներ որոնել: Խոշոր այգեպաններն ևս զանազատում են:

— Այո՛: Ահաւասիկ ես այս օրերս կը փոխեմ իմ այդ չըխորհած ու հրատարակած հրովարտակը, որը դուրս եկաւ մի քանի սխալ տեղեկութիւններ տուող մարդկանց խորհրդով, և բոլոր փասս կրողներին կօգնեմ իրանց վիճակը բարւոքելու, որպէսզի նրանք կարողանան հանգիստ շտրունակել իրանց նախկին գործը... Վաղը ես քեզ հետ աւելի մանրամասն կը խօսեմ, առ այժմ՝ մնաս բարով. չեմ կարող այլևս երկար

\*) Հին հռովմէական արծաթեայ մանր դահեկան:

ստիպել սպասելու իմ ուղեկիցներին... Կլավդիոս Լիվիանոս Տրիբուն, հրամայիր քո մարդկանցից երեքին, որ պատգարակը պաշտպանեն:

Մի բոպէ յետոյ, կայսերական պատգարակը, որի մէջ նստած էին Փլոնիան և նրա ուղեկիցը, երեք կայսերական թիկնապահների ուղեկցութեամբ արագ ուղղւորուեցաւ յետ, դէպի քաղաք, իսկ ինքը երիտասարդ կայսրը նորից ձի նստելով իւր բոլոր շքախումբովը շարունակեց ճանապարհը դէպի Միֆրայի այրը:

Փլոնիան ճանապարհին բոլոր ժամանակը գոհութիւն էր առաքում Քրիստոսին՝ բոլոր թըշուառների ու տառապեալների հովանաւորին և համարում էր կայսերական մատանու դէպքը ուղղակի հրաշք նրա կողմից, Որին ինքը հաւատում էր իւր պարզ սրտով:

Ուրախ էր և Դոմիկիանոսը այդ դէպքից, որովհետև կարողացաւ ուղղել իւր ակամայ սխալը, որը իւր մեծ պետութեան մի մասի վերայ ունեցել էր կորստաբեր հետևանք:

Մի քանի օրից յետոյ, լաւ հանգստացած, փայփայուած և կայսրից առատ վարձատրուած բաղդաւոր կիներ ուրախ վերադարձաւ դէպի իւր ընտանեկան օջախը:

Այս դէպքը տեղի ունեցաւ Դոմիկիանոսի կառավարութեան տարիների հէնց սկզբում, որի թագաւորութեան առաջի երկու տարիները նոյն իսկ ամենախիստ պատմաբանների կոչուած է «բարերար»:



<< Ազգային գրադարան



NL0319853

12.186

ԱՐՄ.

2-5093<sub>2</sub>

**ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.**

*Թարգմանչի հասցեն՝*

Нахичевань на Дону, 25 линия, д. № 29.

Свящ. Н. Боснакіанцъ.